ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/7

ք. Երևան «14» դեկտեմբերի 2018թ

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը», ի դեմս **Աշոտ Կիրակոսյանի**, ով գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Հ.Պողոսյան» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Հ. Պողոսյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **«ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկայի ջեռուցում և վերանորոգում»** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 **Պայմանագրով նախատեսված աշխատանքներն սկսվում են սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է 150 օր:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին (հավելված 5) և ծավալաթերթին (հավելված 1) համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Հակառակ դեպքում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **30 աշխատանքային օրվա** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **14,484,000 (տասնչորս միլիոն չորս հարյուր ութսունչորս հազար) ՀՀ դրամ, որից 2,414,000 (երկու միլիոն չորս հարյուր տասնչորս հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:** Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 4,850,000 (չորս միլիոն ութ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ[1]:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[2].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[3]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

---

[1] *Կապալառուն կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[2] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ

համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1, N 5, N 6 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	«Հ. Պողոսյան» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	ՀՀ, Լոռու մարզ, հ. Գուգարք, 5/35
ՀՎՀՀ՝00846441	ՀՎՀՀ՝ 06938057
Հ/Հ՝ 900018001231	Հ/Հ՝ 220053335067000
Կենտրոնական գանձապետարան	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլբանկ» ՓԲԸ
Գործադիր տնօրեն	Տնօրեն
Աշոտ Կիրակոսյան	Հովիկ Պողոսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 2
«14» դեկտեմբերի 2018 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՀԲ-2018/7 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	**«ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկայի ջեռուցում և վերանորոգում»**	**Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո**	*150 օր*
ԸՆԴԱՄԵՆԸ		**Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո**	*150 օր*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Հ. Պողոսյան» ՍՊԸ
ՀՀ, Լոռու մարզ, հ. Գուգարք, 5/35
ՀՎՀՀ՝ 06938057
Հ/Հ՝ 220053335067000
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլբանկ» ՓԲԸ
Տնօրեն
Հովիկ Պողոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«14» դեկտեմբերի 2018 թ. կնքված
ՀՄ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/7 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018-19թթ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			դեկտեմբեր	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
	45261124	Ջեռուցման հետ կապված աշխատանքներ	14,484,000	14,484,000	14,484,000	14,484,000	14,484,000	14,484,000	14,484,000	14,484,000	14,484,000	14,484,000	14,484,000	14,484,000	14,484,000	14,484,000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Հ. Պողոսյան» ՍՊԸ
ՀՀ, Լոռու մարզ, հ. Գուգարք, 5/35
ՀՎՀՀ՝ 06938057
Հ/Հ՝ 220053335067000
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլբանկ» ՓԲԸ
Տնօրեն
Հովիկ Պողոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » դեկտեմբերի *2018 թ. կնքված*
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/7 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Կատարված աշխատանքների					
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 4.1
« » դեկտեմբերի 2018 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/7 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 5
« 14 » դեկտեմբերի 2018 թ. կնքված
ՀՇ-ԳՀ-ԱՇՀԲ-2018/7 ծածկագրով պայմանագրի

Գծագրերը կից

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Հ. Պողոսյան» ՍՊԸ
ՀՀ, Լոռու մարզ, հ. Գուգարք, 5/35
ՀՎՀՀ՝ 06938057
Հ/Հ՝ 220053335067000
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլբանկ» ՓԲԸ
Տնօրեն
Հովիկ Պողոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 6
« 14 » դեկտեմբերի 2018 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/7 ծածկագրով պայմանագրի

Պատվիրատու
«Հայաստանի տարածքային զարգացմ և հիմնադրամը
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 137,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231

Կատարող
_____
_____
գտնվելու վայրը _____
հ/հ_____
հվհհ_____

ԱԿՏ
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » դեկտեմբերի 2018 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **«ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկայի ջեռուցում և վերանորոգում»** աշխատանքներ
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» *դեկտեմբերի 2018 թ.*
Պայմանագրի համարը՝ *ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/7*
Սույնով Պատվիրատուն և ՀՀ, Լոռու մարզի Վանաձորի համայնքը, մի կողմից և Կատարողը, մյուս կողմից, հիմք ընդունելով թիվ ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/7 պայմանագրի 3.2.3 կետի պահանջները, կազմեցին սույն ԱԿՏ-ը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում նախատեսված աշխատանքների կատարման համար Պատվիրատուն, ՀՀ, Լոռու մարզի Վանաձորի համայնքի հետ համատեղ, հանձնում են, իսկ Կատարողն ընդունում է կողմերի միջև կնքված պայմանագրին կից Նախագծով նախատեսված տարածքը:

Տարածքը հանձնեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Տարածքը ընդունեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված թիվ 1
..14 դեկտեմբերի 2018 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/7 ծածկագրով պայմանագրի ծավալաթերթ-նախահաշիվ

NN	Աշխատանքի անվանումը	Չափ. միավ.	Քա-նակ	Արժեքը հազ.դրամ միավորի	Ամբողջը
1	2	3	4	5	6
	Հատակներ				
1	Սալիկներից հատակի քանդում	100մ^2	1,3960	49,85	69,591
2	Ց/ավազային հարթեցուցիչ շերտի քանդում	100մ^2	1,3960	42,87	59,850
3	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ.	100 մ^2	1,3960	150,68	210,349
4	Հատակների կառուցում մամլոգրանիտե սալիկներից / 400*400 /	100մ^2	1,3960	1075,49	1501,377
5	Շրիշակների կառուցում մամլոգրանիտե սալիկներից / 400*400 /	100մ^2	0,186	1075,49	200,040
	Բացվածքներ			0,00	0,000
1	Փայտե պատուհանների քանդում /պատուհանագոգերի հետ միասին/	100մ^2	1,4202	232,73	330,523
2	Փայտե դռների քանդում	100մ^2	0,5664	138,25	78,306
3	Մետաղապլաստե պատուհանների տեղա-դրում/բացվող (Հայկ.պրոֆիլ.սպիտակ)60մմ հաստ,4+4 ապակեփաթեթ Պ-1,Պ--2-52հատ	մ^2	46,26	32,39	1498,361
4	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում/չբացվող (Հայկ.պրոֆիլ.սպիտակ)60մմ հաստ,4+4 ապակեփաթեթ Պ-1,Պ-2 --52 հատ	մ^2	95,78	21,11	2021,916
5	Մետաղապլաստե պատուհանագոգերի տեղադրում 300մմ լայն,	մ^2	142,02	0,85	121,285
6	Մետաղապլաստե պատուհանագոգերի տեղադրում /30 սմ լայն./	գմ	84,1	4,67	392,327
7	Արտաքին պատուհանագոգերի երեսպատում ցինկ թիթեղից 0,55մմ	100մ^2	0,16	362,55	58,008
8	Մետաղապլաստե դռան տեղադրում 60մմ (օտար պրոֆիլ.սպիտակ գույն)Դ-Տ 1-հատ	մ^2	2,94	53,30	156,687
9	Մետաղապլաստե վերնափեղկի տեղադրում /չբացվող (օտար.պրոֆիլ.սպիտակ)60մմ հստ, ապակի 4մմ, ---1 հատ	մ^2	5,76	33,52	193,046
10	Դռների տեղադրում միջնորմներում մինչև 3մ2 մակերեսով Դ-1-10 հատ	մ^2	18,240	6,41	116,931
11	Դռան շրջանակ (ՄԴՖ)	մ^2	18,240	57,66	1051,718
12	Պարագա	կտ	10,00	1,54	15,380
13	Փական	հտ	10,00	7,66	76,620
14	Դռների տեղադրում միջնորմներում մինչև 3մ2 մակերեսով Դ-1- 3 հատ	մ^2	5,472	6,41	35,097
15	Դռան շրջանակ (ՄԴՖ)	մ^2	5,472	57,70	315,723
16	Պարագա	կտ	3,00	1,54	4,614
17	Փական	հտ	3,00	7,66	22,986
18	Դռների տեղադրում միջնորմներում մինչև 3մ2 մակերեսով Դ-3- 2 հատ	մ^2	2,724	6,41	17,472
19	Դռան շրջանակ (ՄԴՖ)	մ^2	2,724	57,70	157,169
20	Պարագա	կտ	2,00	1,54	3,076
21	Փական	հտ	2,00	7,66	15,324
	Հարդարման աշխատանքներ			0,00	0,000
1	Շեպերի սվաղում գաջի շաղախով	100մ^2	0,5322	519,81	276,643
2	Շեպերի յուղաներկում	100մ^2	0,5322	120,64	64,205
3	Արտաքին շեպերի սվաղում ց/ա շաղախ մինչև 20 սմ լայն,	100մ	2,661	70,368	321,023
4	Անցքերի բացում միջնորմներում 100մմ հստ, անցքերի փակումով ցեմ/շաղախով	1հտ	3,00	2,02	6,072
5	Պատերի գաջի սվաղի նորոգում առանձին տեղերում մինչև 10մ2	100մ^2	0,10	285,40	28,540
6	Պատերի ներկում լատեքսով բարելաված որակի	100մ^2	0,10	151,13	15,113
	Կաթսաների ջրամատակարարում				0,000
1	Պողպատե խողովակների ապամոնտաժ մինչև Φ32մմ տրամագծով /Φ15,/	մ	7,0	1,101	7,707

2	Փականների ապամոնտաժ /Φ15,/	հտ	4,0	1,101	4,404
3	Միացում գործող ջրագծին d=15մմ	հտ	3,00	1,176	3,528
4	Անցում 20*1,9/Dy15 պոլիպ/մետաղ	հտ	2,0	0,49	0,980
5	Պոլիպրոպիլենային խողովակի տեղադրում փորձարկումով d=20*1,9 մմ	մ	24,0	2,93	70,272
6	Անկյունակ օղագոտիով պոլիպ. d =20մմ	հտ	6,0	0,18	1,104
7	Եռաբաշխիչ օղագոտիով 20/20/20մմ	հատ	4,0	0,118	0,472
8	Արտուղում օղագոտիով Φ20մմ	հատ	4,0	0,701	2,804
9	Կցամաս 20մմ	հատ	30,0	0,043	21,030
10	Փական օղագոտիով, d=20մմ	կ-տ	2,0	3,59	7,170
11	Անցքերի բացում միջնորմներում հաստ,100մմ	100հտ	0,02	97,88	1,958
12	Պողպատե պատյան պողպ.խողովակից d =25*2,5մմ,	մ	0,25	1,41	0,353
13	Պողպատե խողովակների յուղաներկում /2 անգամ/	100մ^2	0,003	87,62	0,263
	թիվ 3 պոլիկլինիկայի ջեռուցման աշխատանքներ			0,00	0,000
	1-ին հարկ, 1-2 Համակարգեր ,				
1	Թուջե մարտկոցների ապամոնտաժ	1մարտ-կոց	41,0	1,90	77,695
2	Պողպատե խողովակների ապամոնտաժ մինչև Φ32մմ տրամագծով /Φ15,Φ20/	մ	130,0	1,10	143,130
3	Ջեռուցման կաթսա - 35 կվտ /փակ այրման խցով տուրբո երկկոնտուր/	հատ	2,0	409,92	819,840
4	Պոմպ շրջանառու(Wilo) TOP-S 40/10,"N=68վտ, H=9,1մ,Q=6,3մ^3/^{ժ}	հատ	2,0	13,44	26,880
5	Ալյումինե մարտկոցների տեղադրում	էկմ	99,145	0,779	77,234
6	Ալյումինե մարտկոց,H=500 մմ	սեկց.	251,0	6,083	1526,733
7	Պոլիպրոպիլենային խողովակների d=20*1,9մմ փորձարկումով	մ	66,0	3,350	221,100
8	Պոլիպրոպիլենային խողովակներ d=25*2,3մմ փորձարկումով	մ	72,0	3,194	229,954
9	Պոլիպրոպիլենային խողովակների ջերմոմեկուսացում գլանաձև մեկուսիչներով d=25*2,3մմ	մ	4,0	0,122	0,488
10	Պոլիպրոպիլենային խողովակներ d=32*3,0մմ փորձարկումով	մ	136,0	3,290	447,440
11	Պոլիպրոպիլենային խողովակների ջերմոմեկուսացում գլանաձև մեկուսիչներով d=32*3մմ	մ	16,0	0,184	2,944
12	Օղագոտի պոմպի համար. d =32մմ	հատ	4,0	0,184	0,736
13	Փական օղագոտիով, դատարկման ծորակով. d=20մմ	կ-տ	4,0	3,585	14,340
14	Փական օղագոտիով, d=25մմ	կ-տ	4,0	3,585	14,340
15	Ջտիչ օղագոտիով, d=25մմ	կ-տ	2,0	0,902	1,804
16	Փականի տեղադրում d=20մմ,ներքին	հատ	40,0	5,502	220,080
17	Փականի տեղադրում d=20մմ,վերին	հատ	40,0	5,765	230,580
18	Անկյունակ օղագոտիով պոլիպ. d =32մմ	հատ	32,0	0,490	15,680
19	Անկյունակ օղագոտիով պոլիպ. d =25մմ	հատ	10,0	0,276	2,760
20	Անկյունակ օղագոտիով պոլիպ. d =20մմ	հատ	12,0	0,184	2,208
21	Անցում 32/25	հատ	4,0	0,084	0,336
22	Անցում 25/20	հատ	4,0	0,055	0,220
23	Եռաբաշխիչ 32/32/20մմ	հատ	40,0	0,252	10,080
24	Եռաբաշխիչ 25/25/20մմ	հատ	28,0	0,145	4,046
25	Եռաբաշխիչ 20/20/20մմ	հատ	6,0	0,118	0,708
26	Օդահեռացման ծորակ d =15 մմ	կոմպլ	40,0	0,555	22,200
27	Խցան մարտկոցի Φ20մմ	հատ	80,0	0,092	7,360
28	Արտուղում մարտկոցի Φ20մմ	հատ	80,0	0,702	56,160
29	Արտուղում կաթսայի Φ25մմ	հատ	4,0	0,702	2,808
30	Կցամաս 32մմ	հատ	233,0	0,105	24,465
31	Կցամաս 25մմ	հատ	116,0	0,066	7,656
32	Կցամաս 20մմ	հատ	110,0	0,043	4,730
33	Մարտկոցների կախիչ	հատ	80,0	0,639	51,120
34	Պողպատե մարտկոցի մոնտաժային կոմպլեկտ	կ-տ	40,0	2,297	91,880
35	Բաժանարար սանրիկ d =89*4մմ, L=0,5մ	հատ	4,0	5,243	20,972

36	Պողպատե պատյան պողպ.խողովակից d =40*3մմ,	մ	9,24	2,392	22,102
37	Պողպատե պատյան պողպ.խողովակից d =32*3մմ,	մ	3,18	1,896	6,029
38	Պողպատե պատյան պողպ.խողովակից d =25*2,5մմ,	մ	0,44	1,413	0,622
39	Պողպատե խողովակների յուղաներկում /2 անգամ/	100մ^2	0,030	90,890	2,727
40	Անցքերի բացում պատերում հաստ,400մմ	100հտ	0,07	311,400	21,798
41	Անցքերի բացում պատերում հաստ,400մմ	100հտ	0,02	311,400	6,228
42	Անցքերի բացում միջնորմներում հաստ,100մմ	100հտ	0,24	97,875	23,490
					0,000
	2-րդ հարկ				0,000
	1-ին հարկ, 3-4համակարգեր ,				
1	Ջեռուցման կաթսա - 35 կվտ /փակ այրման խցով տուրբո երկկոնտուր/	հատ	2,0	409,92	819,840
2	Պոմպ շրջանառու(Wilo) TOP-S 40/10,"N=680վտ, H=9,1մ,Q=6,3մ^3/^{ժ}	հատ	2,0	13,44	26,880
3	Ալյումինե մարտկոցների տեղադրում	էկմ	103,10	0,779	80,311
4	Ալյումինե մարտկոց,H=500 մմ	սեկց.	261,0	6,083	1587,559
5	Պոլիպրոպիլենային խողովակների d=20*1,9մմ փորձարկումով	մ	64,0	3,350	214,400
6	Պոլիպրոպիլենային խողովակներ d=25*2,3մմ փորձարկումով	մ	66,0	3,194	210,791
7	Պոլիպրոպիլենային խողովակների ջերմոմեկուսացում գլանաձև մեկուսիչներով d=25*2,3մմ	մ	5,0	0,122	0,610
8	Պոլիպրոպիլենային խողովակներ d=32*3,0մմ փորձարկումով	մ	148,0	3,290	486,920
9	Օդագոտի պոմպի համար. d =32մմ	հատ	2,0	0,184	0,368
10	Փական օդագոտիով, դատարկման ծորակով. d=20մմ	կ-տ	2,0	3,585	7,170
11	Փական օդագոտիով, d=25մմ	կ-տ	4,0	3,585	14,340
12	Զտիչ օդագոտիով, d=25մմ	կ-տ	2,0	1,902	3,804
13	Փականի տեղադրում d=20մմ,ներքին	հատ	38,0	5,508	209,304
14	Փականի տեղադրում d=20մմ,վերին	հատ	38,0	5,765	219,051
15	Անկյունակ օդագոտիով պոլիպ. d =32մմ	հատ	7,0	0,490	3,430
16	Անկյունակ օդագոտիով պոլիպ. d =25մմ	հատ	10,0	0,276	2,760
17	Անկյունակ օդագոտիով պոլիպ. d =20մմ	հատ	16,0	0,184	2,944
18	Անցում 32/25	հատ	4,0	0,084	0,336
19	Անցում 25/20	հատ	4,0	0,055	0,22[illegible]
20	Եռաբաշխիչ 32/32/20մմ	հատ	40,0	0,252	10,080
21	Եռաբաշխիչ 25/25/20մմ	հատ	18,0	0,145	2,601
22	Եռաբաշխիչ 20/20/20մմ	հատ	8,0	0,118	0,944
23	Եռաբաշխիչ 25/25/25 մմ	հատ	2,0	0,127	0,254
24	Եռաբաշխիչ 32/32/32մմ	հատ	4,0	0,255	1,020
25	Օդահեռացման ծորակ d =15 մմ	կոմպլ	38,0	0,555	21,090
26	Խցան մարտկոցի Φ20մմ	հատ	76,0	0,092	6,992
27	Արտուղում մարտկոցի Φ20մմ	հատ	76,0	0,639	48,564
28	Արտուղում կաթսայի Φ25մմ	հատ	4,0	0,639	2,556
29	Կցամաս 32մմ	հատ	227,0	0,105	23,835
30	Կցամաս 25մմ	հատ	108,0	0,066	7,128
31	Կցամաս 20մմ				

38	Անցքերի բացում պատերում հաստ,400մմ	100հտ	0,04	311,400	12,456
39	Անցքերի բացում պատերում հաստ,400մմ	100հտ	0,03	311,400	9,342
40	Անցքերի բացում միջնորմներում հաստ,100մմ	100հտ	0,30	97,875	29,363
	Օդափոխություն			0,00	0,000
1	Օդատարի կառուցում ցինկապատ թիթեղից 0.5 մմ հաստ. 150*200 մմ	մ^2	1,4	5,298	7,417
2	Օդատարի կառուցում ցինկապատ թիթեղից 0.5 մմ հաստ. 150*150 մմ	մ^2	3,0	5,298	15,894
3	Դեկորատիվ ցանցի տեղադրում Ռ 150 մմ	հատ	1,0	3,454	3,45[illegible]
4	Դեկորատիվ ցանցի տեղադրում Ռ 150 *200մմ	հատ	1,0	3,760	3,760
5	Զոնտի կառուցում ցինկապատ թիթեղից	մ^2	2,60	5,422	14,097
6	Անցքերի բացում /միջհարկային ծածկ/	100հտ	0,02	153,390	3,068
7	Անցքերի բացում պատերում հստ,400մմ	100հտ	0,04	311,400	3,915
8	Անցքերի բացում պատերում հստ,Φ220մմ	100հտ	0,03	97,875	2,936
9	Անցքերի բացում միջնորմում100մմ հստ,	100հտ	0,01	97,875	0,979
10	Խողովակների մեկուսացում հանքաբամբակե ներքնակով պատված ֆոլգայով	մ^3	0,08	20,150	1,612
11	Հանքաբամբակ ֆոլգայով/արժեք/	մ^2	1,00	0,740	0,740
	Տաք ջրամատակարարում			0,000	0,00[illegible]
1	Պոլիպրոպիլենային խողովակի տեղադրում փորձարկումով d=20*2,8 մմ	մ	13,0	2,938	38,194
2	Պոլիպրոպիլենային խողովակի տեղադրում փորձարկումով d=20*2,8 մմ	մ	14,0	2,938	41,132
3	Անկյունակ օղագոտիով պոլիպ. d =20մմ	հտ	6,0	0,184	1,104
4	Արտուղում օղագոտիով Φ20մմ	հատ	2,0	0,702	1,404
5	Կցամաս 20մմ	հատ	41,0	0,043	1,763
6	Փական օղագոտիով, d=20մմ	կ-տ	2,0	3,585	7,170
7	Լվացարանի ծորակի տեղադրում d=15մմ	հատ	4,0	7,255	29,020
8	Անցքերի բացում միջնորմներում հաստ,100մմ	100հտ	0,03	97,875	2,936
9	Պողպատե պատյան պողպ.խողովակից d =25*2,5մմ,	մ	0,50	1,412	0,706
10	Պողպատե խողովակների յուղաներկում /2 անգամ/	100մ^2	0,003	90,860	0,273
11	Բետոնե հատակի քանդում	մ^3	0,30	19,200	5,760
12	Բետոնե նախաշերտ /հատակ/	մ^3	0,30	41,972	12,5[illegible]2
13	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ.	100մ^2	0,014	150,060	2,101
	Արտաքին գազամատակարարում				0,000
1	Խրամուղու փորում ձեռքով 3-րդ կարգի բնահողերում	մ^3	2,30	2,481	5,706
2	Ավելորդ բնահողի փռում տեղում	մ^3	2,30	1,038	2,387
3	Միաձույլ բետոնե հիմքերի կառուցում սյուների տակ Վ - 12.5 դասի բետոնից	մ^3	2,03	55,480	112,624
4	Մետաղական հենարանների տեղադրում ոչ ստանդարտ խողովակից	տն	0,12462	61,622	7,679
5	Պողպ/խողովակ 57*3,5մմ	մ	12,00	2,900	34,800
6	Պողպ/խողովակ 40*3,0մմ	մ	34,00	1,810	61,540
7	Ջրագազամուղային պողպ. խողովակի տեղադրում հենասյան վրա d=40*3,0մմ /փորձարկումով /	մ	12,0	2,965	35,580
8	Ջրագազամուղային պողպ. խողովակի տեղադրում հենասյան վրա d=32*3,0մմ /փորձարկումով /	մ	61,0	2,471	150,731
9	Ջրագազամուղային պողպ. խողովակի տեղադրում պատերի վրա d=32*3մմ /փորձարկումով /	մ	31,0	2,400	74,400
10	Ջրագազամուղային պողպ. խողովակի տեղադրում շենքի ներսում d=25*2,5մմ /փորձարկումով /	մ	103,0	1,960	201,880
11	Ձևավոր մասեր / անկյունակ Φ57/	հատ	12,0	0,853	10,236
12	Գազատարի ամրացման մասերի տեղադրում 7+2,5=9,5կգ	տն	0,0095	598,310	5,684
13	Գազատար խողովակների փչամաքրում	1000մ	0,177	797,784	141,208
15	Գազատարի խցափակումD25մմ	հատ	2,00	20,482	40,964
16	Գազատարի խցափակումD32մմ	հատ	4,00	20,482	81,928
17	Գազատարի միացում գործող գազատարինd=89*4,0մմ	հատ	1,0	72,131	72,131
18	Պողպատե ձևավոր մասեր	տն	0,005	1641,200	8,20[illegible]

19	Գազատարի զոդակարերի ստուգարք	հատ	1,00	3,198	3,198
20	G -25Aտիպի հաշվիչ հանգույց	կ-տ	1,00	427,437	427,437
21	Գազի ճնշման կարգավորիչGS-72-27	հատ	1,00	126,00	126,00
22	Մետաղ.արկղ	հատ	1,00	52,540	52,540
23	Ռետին	կգ	3,000	0,614	1,842
24	Սահուն հենարանների յուղաներկում /2 անգամ/	100մ^2	0,084	81,248	6,825
25	Գազատարի յուղաներկում /2 անգամ/	100մ^2	0,347	81,248	28,193
26	Ճկախողովակ d=15մմ ,L=0,6մ-4 հատ	մ	2,40	1,380	3,312
27	Փականի տեղադրում d=20մմ	հատ	1,0	5,110	5,110
28	Սողնակի տեղադրում d=32մմ	հատ	1,0	6,270	6,270
29	Ազդանշանիչ սարքի տեղադրում	հատ	1,0	13,125	13,125
30	Փականի տեղադրում /վթարային/ d25 մմ/գազի/	հատ	2,0	7,754	15,508
31	Ջրագազամուղային պողպ. խողովակի տեղադրում պատերի վրա d=15մմ /ազդանշանային խողովակ/	մ	6,0	1,260	7,560
32	Խողովակների յուղաներկում 2 անգամ /ազդանշանային խողովակ/	100մ^2	0,007	119,600	0,837
33	Անցքերի բացում պատերում 0,05*0,05*0,6	100հտ	0,04	311,400	12,456
34	պողպ. խողովակից պատյանի տեղադրում d=32*3մմ , L=0,6մ- 4 հատ	մ	2,4	2,438	5,851
35	Հաղորդալարի անցկացում ՊՎՔ 2*2.5մմԱ	100մ	0,20	57,940	11,588
36	Երկբևեռ վարդակ ՍԻ~220Վ,16Ամ=6Ա	հատ	2,0	1,540	3,080
37	Պլաստմասե սակառ 10*10մմ ,	մ	20,0	0,337	6,740
	Ընդամենը				20243,942
	ԱԱՀ	20%			4 048,788
	Ընդամենը				24 292,730

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Հ. Պողոսյան» ՍՊԸ
ՀՀ, Լոռու մարզ, հ. Գուգարք, 5/35
ՀՎՀՀ՝ 06938057
Հ/Հ՝ 220053335067000
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլբանկ» ՓԲԸ
Տնօրեն
Հովիկ Պողոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 9
ՀԾ-ԳՀ-ԱԵՀԲ-2018/7 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «____»_____ 20 թ.**

« Հ. Պողոսյան » ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Հովիկ Պողոսյանի / նույն. քարտ 000053223,տրվ.է 22.11.2012թ./. որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ *ՀԾ-ԳՀ-ԱԵՀԲ-2018/7* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև /__/____/20__ ** (Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ):

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ՝

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝« Հ. Պողոսյան » ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝220053335067000

7. Վճարողի ՀՎՀՀ՝06938057

8. Վճարողի ՀՇՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

10. Շահառուի ՀՇՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝00846441

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N)՝ 900018001231

14.Գումարը (թվերով և բառերով)՝1448400/մեկ միլիոն չորս հարյուր քառասունութ հազար չորս հարյուր /

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝(Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.